ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒԼԻՍԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 72-Ն

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱԿԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ և 42-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի վարչական տարածքում աղբահանության և սանիտարական մաքրման իրականացման կարգն ու պայմանները՝ համաձայն սույն որոշման 1-7 հավելվածների:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված 1
Արենի համայնքի ավագանու
08.07.2022 թ.-ի թիվ 72-Ա որոշման

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

գ. Արենի «___» _____ 20___թ.

«Արենի» Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (ՀՈԱԿ)՝ ի դեմս տնօրեն Սերյոժա Սիմոնյանի, (այսուհետ՝ Կատարող), որ գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից և քաղաքացի _____-ը (այսուհետ՝ Պատվիրատու) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պատվիրատուն պատվիրում, իսկ Կատարողը պարտավոր է իր ուժերով ու միջոցներով իրականացնել Պատվիրատուի կենսագործունեության հետևանքով առաջացած աղբի կանոնավոր տեղափոխումը ՀՀ օրենսդրությամբ և համայնքի ավագանու սահմանած կանոններին համապատասխան:
Պատվիրատուն պարտավորվում է վճարել մատուցված ծառայությունների դիմաց սույն պայմանագրով սահմանված չափով, կարգով ու ժամկետներում:
1.2. Կողմերը սույն պայամանագրի շրջանակներում ղեկավարվում են ՀՀ օրենքներով, ՀՀ Կառավարության որոշումներով, Արենի համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումներով և այլ իրավական ակտերով:
1.3. Կատարողի հետ համաձայնեցված վայրում տեղակայված մեծածավալ/մեծամասշտաբ աղբի հավաքումն ու փոխադրումը կատարվում է Պատվիրատուի լրացուցիչ պատվերի հիման վրա՝ ծառայության համար գանձվող առանձին վճարի դիմաց, որի մասին կնքվում է լրացուցիչ համաձայնագիր:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝
2.1.1. Պատշաճ ապահովել Պատվիրատուի բնականոն գործունեությունից առաջացած աղբի հավաքումն ու փոխադրումը.
2.1.2. Ունենալ համապատասխան քանակությամբ արկղեր, որոնք կհամապատասխանեն աղբի կուտակման չափին ու հեռացման հաճախականությանը.
2.1.3. Ինքնուրույն իրականացրած աղբը հավաքելն ու փոխադրելը այն տարածքից, որն աղտոտվել էր արկղերի բեռման/բեռնաթափման աշխատանքներից հետո.
2.1.4 Պատվիրատուին հստակ տեղեկություն տալ այն պաշտոնատար անձանց և նրանց դիմելու ձևերի և միջոցների մասին (պաշտոնատար անձի գտնվելու վայր, հեռախոսահամարներ), որոնց Պատվիրատուն կարող է դիմել աղբահանության ժամանակ թերություններ արձանագրելիս:
2.2. Կատարողն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել՝
2.2.1. Աղբը հավաքել դրանց համար նախատեսված վայրում՝ համայնքի կողմից սահմանված ձևով.
2.2.2. Պայմանագրային պարտավորությունների խախտումների, ինչպես նաև աղբի չսահմանված, չնախատեսված վայրում դուրս թափելու համար վճարել տուգանքներ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափերով ու կարգով:
2.3. Պատվիրատուն պարտավոր է՝
2.3.1. Վճարել սույն պայմանագրի 2.1.1 կետի համապատասխան մատուցված ծառայության վճարը մինչև հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ.
2.3.2. Արկղերի մեջ չլցնել շինարարական, վտանգավոր, արգելված. հեղուկ թափոններ.
2.3.3. Աղբը տեղադրել միայն համայնքի կողմից սահմանված վայրերում.
2.3.4. Չտեղափոխել, չտեղահանել, չտեղաշարժել կամ չշրջել արկղերը.

2.3.5. Տեղյակ պահել Կատարողին Պատվիրատուի մոտ տեղի ունեցած այն փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել աղբահանության վճարի չափի վրա, փոփոխություն կատարելու օրվանից սկսած 10 օրվա ընթացքում:

2.4. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.4.1. Ստուգել Կատարողի կողմից մատուցված ծառայությունների որակը, համապատասխանությունը համայնքի կողմից հաստատված գրաֆիկին ու կարգին.

2.4.2. Հայտնաբերված թերությունների մասին տեղեկացնել Կատարողին թերությունների հայտնաբերման օրվան հաջորդող օրը:

4. Այլ պայմաններ՝

4.1. Աղբի կուտակման, հավաքման, փոխադրման, հեռացման համար սահմանվում է ծառայության ամսական վճար _____ ( ) դրամ՝ յուրաքանչյուր անձի համար: Ամսվա ընդհանուր գումարը կազմում է _____ (_____) դրամ: Մատուցած ծառայության գումարը սահմանված ժամկետում չվճարելու համար Պատվիրատուն պարտավոր է Կատարողին վճարել տուգանք օրենսդրությամբ սահմանված չափով: Տուգանքի վճարումը չի ազատում Պատվիրատուին արդեն մատուցված ծառայությունների համար վճարելու պարտականություններից:

4.2. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

4.3. Պայմանագիրը համարվում է կնքված ստորագրման պահից և գործում է մեկ տարի: Այդ ժամկետը լրանալուց հետո, եթե կողմերից ոչ մեկը չի պահանջում պայմանագրի լուծում, ապա այն շարունակում է գործել ևս մեկ տարի:

4.4. Պայմանագրի լրացումները և փոփոխությունները իրավական ուժ ունեն և հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, եթե կատարվել են գրավոր և ստորագրվել Պատվիրատուի և Կատարողի կողմից:

4.5. Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Եթե վիճելի հարցի շուրջ համաձայնություն ձեռք չի բերվում, ապա դրանք լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատական կարգով:

4.6. Կողմերը ազատվում են պատասխանատվությունից, եթե ապացուցում են, որ սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարումը անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք է:

«Կատարող»	«Պատվիրատու»
Արենի համայնք	քաղաքացի
Հ/Հ_____	
ՀՎՀՀ_____	_____
Բանկ_____	Հասցե՝ _____
Համայնքի ղեկավար՝	_____
_____	

Հավելված 2
Արենի համայնքի ավագանու
08.07.2022 թ.-ի թիվ 72-Ա որոշման

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

գ. Արենի «___» _____ 20___թ.

«Արենի» Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (ՀՈԱԿ)՝ ի դեմս տնօրեն Սերյոժա Սիմոնյանի, (այսուհետ՝ Կատարող), ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից և _____ կազմակերպությունը՝ ի դեմս տնօրեն _____ի, ով գործում է կազմակերպության կանոնադրության (կամ լիազորագրի) հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պատվիրատուն պատվիրում, իսկ Կատարողը պարտավոր է իր ուժերով ու միջոցներով իրականացնել Պատվիրատուի բնականոն գործունեության հետևանքով առաջացած աղբի կանոնավոր տեղափոխումը ՀՀ օրենսդրությամբ և համայնքի ավագանու սահմանած կանոններին համապատասխան:
Պատվիրատուն պարտավորվում է վճարել մատուցված ծառայությունների դիմաց սույն պայմանագրով սահմանված չափով, կարգով ու ժամկետներում:
1.2. Կողմերը սույն պայամանագրի շրջանակներում ղեկավարվում են ՀՀ օրենքներով, ՀՀ Կառավարության որոշումներով, Արենի համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումներով և այլ իրավական ակտերով:
1.3. Աղբի բեռնումը արկղերից բեռնատար /աղբատար/ մեքենաներ կատարվում են Կատարողի կողմից:
1.4. Կատարողի հետ համաձայնեցված վայրում տեղակայված մեծածավալ/մեծամասշտաբ աղբի հավաքումն ու փոխադրումը կատարվում է Պատվիրատուի լրացուցիչ պատվերի հիման վրա՝ ծառայության համար գանձվող առանձին վճարի դիմաց, որի մասին կնքվում է լրացուցիչ համաձայնագիր:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝
2.1.1. Պատշաճ ապահովել Պատվիրատուի բնականոն գործունեությունից առաջացած աղբի հավաքումն ու փոխադրումը.
2.1.2. Ունենալ համապատասխան քանակությամբ արկղեր, որոնք կհամապատասխանեն աղբի կուտակման չափին ու հեռացման հաճախականությանը.
2.1.3. Ինքնուրույն իրականացնել աղբի հավաքումն ու փոխադրումը այն տարածքից, որն աղտոտվել էր արկղերի բեռման/բեռնաթափման աշխատանքներից հետո.
2.1.4. Տեղադրված արկղերը պահել մաքուր վիճակում, շահագործման համար ոչ պիտանի դարձածները փոխարինել նորերով.
2.1.5. Պատվիրատուին հստակ տեղեկություն տալ այն պաշտոնատար անձանց և նրանց դիմելու ձևերի և միջոցների մասին (պաշտոնատար անձի գտնվելու վայր, հեռախոսահամարներ), որոնց Պատվիրատուն կարող է դիմել աղբահանության ժամանակ թերություններ արձանագրելիս:
2.2. Կատարողն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել՝
2.2.1. Աղբը հավաքել դրանց համար նախատեսված վայրում՝ համայնքի կողմից սահմանված ձևով.

2.2.2. Պայմանագրային պարտավորությունների խախտումների, ինչպես նաև աղբի չսահմանված, չնախատեսված վայրում դուրս թափելու համար վճարել տուգանքներ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափերով ու կարգով:

2.3. Պատվիրատուն պարտավոր է՝

2.3.1. Վճարել սույն պայմանագրի 2.1.1 կետի համապատասխան մատուցված ծառայության վճարը մինչև հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ.

2.3.2. Արկղերի մեջ չլցնել շինարարական, վտանգավոր, արգելված, հեղուկ թափոններ.

2.3.3. Աղբը տեղադրել միայն համայնքի կողմից սահմանված վայրերում.

2.3.4. Չտեղափոխել, չտեղահանել, չտեղաշարժել կամ չշրջել արկղերը.

2.3.5. Տեղյակ պահել Կատարողին Պատվիրատուի մոտ տեղի ունեցած այն փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել աղբի ծավալի վրա, փոփոխություն կատարելու օրվանից սկսած 10 օրվա ընթացքում:

2.4. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.4.1. Ստուգել Կատարողի կողմից մատուցված ծառայությունների որակը, համապատասխանությունը համայնքի կողմից հաստատված գրաֆիկին ու կարգին.

2.4.2. Հայտնաբերված թերությունների մասին տեղեկացնել համայնքի ղեկավարին թերությունների հայտնաբերման օրվան հաջորդող օրը:

4. Այլ պայմաններ

4.1. Համայնքի ավագանու կողմից սահմանված աղբահանության ամսական վճարը կազմում է _____ ( ) դրամ: Մատուցած ծառայության գումարը սահմանված ժամկետում չվճարելու համար Պատվիրատուն պարտավոր է Կատարողին վճարել տուգանք օրենսդրությամբ սահմանված չափով: Տուգանքի վճարումը չի ազատում Պատվիրատուին արդեն մատուցված ծառայությունների համար վճարելու պարտականություններից:

4.2. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

4.3. Պայմանագիրը համարվում է կնքված ստորագրման պահից և գործում է մեկ տարի: Այդ ժամկետը լրանալուց հետո, եթե կողմերից ոչ մեկը չի պահանջում պայմանագրի լուծում, ապա այն շարունակում է գործել ևս մեկ տարի:

4.4. Պայմանագրի լրացումները և փոփոխությունները իրավական ուժ ունեն և հանդիսանում են պայմանգրի անբաժանելի մասը, եթե կատարվել են գրավոր և ստորագրվել Պատվիրատուի և Կատարողի կողմից:

4.5. Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Եթե վիճելի հարցի շուրջ համաձայնություն ձեռք չի բերվում, ապա դրանք լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատական կարգով:

4.6. Կողմերը ազատվում են պատասխանատվությունից, եթե ապացուցում են, որ սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարումը անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք է:

«Կատարող»	«Պատվիրատու»
Արենի համայնք	
Հ/Հ_____	Հ/Հ_____
ՀՎՀՀ_____	ՀՎՀՀ_____
Բանկ_____	Բանկ_____
Համայնքի ղեկավար՝ _____	Տնօրեն՝ _____

Հավելված 3
Արենի համայնքի ավագանու
08.07.2022 թ.-ի թիվ 72-Ա որոշման

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

«___» _____ 20___թ. թիվ _____ պայմանագրի

գ. Արենի «___» _____ 20___թ.

«Արենի» Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (ՀՈԱԿ)՝ ի դեմս տնօրեն Սերյոժա Սիմոնյանի, (այսուհետ՝ Կատարող), ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից և _____ կազմակերպությունը՝ ի դեմս տնօրեն _____ի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (կամ քաղաքացի_____ը) (այսուհետ՝ Պատվիրատու) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.1 Կատարողը պարտավոր է Պատվիրատուի առաջադրանքով իրականացնել աղբի հավաքման, փոխադրման, պահման, հեռացման և տեղադրման հետ կապված ծառայության մատուցումը:
1.2 Աղբի քանակը _____( ) է:
1.3 Պատվիրատուն պարտավորվում է լրացուցիչ պատվերի համար վճարել 1 խմ աղբի համար համայնքի ավագանու սահմանած _____ սակագնով:
Ծառայության մատուցման գինը կազմում է _____ դրամ: Պատվիրատուն վճարում է ծառայության գինը ծառայության մատուցմանը հաջորդող օրը կամ համաձայնությունը կնքելու և աշխատանքը կատարելու պահին որպես կանխավճար:
1.4 Ծառայությունը մատուցվում է _____ օրվա ընթացքում:

«Կատարող»	«Պատվիրատու»
Արենի համայնք	
Հ/Հ_____	Հ/Հ_____
ՀՎՀՀ_____	ՀՎՀՀ_____
Բանկ_____	Բանկ_____
Համայնքի ղեկավար՝_____	Տնօրեն՝_____

Հավելված 4
Արենի համայնքի ավագանու
08.07.2022 թ.-ի թիվ 72-Ա որոշման

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԽՈՇՈՐ ԵԶՐԱՉԱՓԻ ԱՂԲԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՀԱՎԱՔՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

N	Թույլտվության վճարի տեսակը	Դրույքաչափերը (դրամ)
		Արենի համայնք
1	Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի՝ ըստ ծավալի մեկ խորանարդ մետրի ինքնուրույն հավաքման և տեղափոխման թույլտվության համար՝	5000
2	Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի՝ ըստ զանգվածի մեկ տոննայի ինքնուրույն հավաքման և տեղափոխման թույլտվության համար	5000

Աշխատակազմի քարտուղար՝ Ք. Մխիթարյան

Հավելված 5
Արենի համայնքի ավագանու
08.07.2022 թ.-ի թիվ 72-Ա որոշման

ԿԱՐԳ
ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) կարգավորվում են Արենի համայնքում (Ագարակաձոր, Աղավնաձոր, Արենի, Արփի, Գնիշիկ, Ելփին, Խաչիկ, Չիվա, Ռինդ) աղբահանության վճար վճարողների հաշվառման և աղբահանության վճարի գանձման հետ կապված հարաբերությունները:
2. Աղբահանության վճարի հաշվարկման և գանձման համար հիմք է հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածին համապատասխան՝ աղբահանության վճարի դրույքաչափերը սահմանելու մասին Արենի համայնքի ավագանու որոշումը:
3. Սույն կարգով չեն կարգավորվում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվություններ տալու հետ կապված հարաբերությունները:

I. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը

4. Աղբահանության վճար վճարողներ են հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված անձինք:
5. Աղբահանության վճարողների հաշվառումն իրականացվում է վճարողների գրանցման մատյանում գրանցելու միջոցով: Վճարողների գրանցամատյանը վարվում է համապատասխան համակարգչային ծրագրով:
6. Աղբահանության վճարողների հաշվառումն իրականացնում է համայնքի ավագանու որոշմամբ աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները իրականացնող համայնքային հիմնարկը կամ համայնքի կարիքների համար գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված օպերատորը (այսուհետ՝ Կազմակերպություն):
7. Կազմակերպությունը վարում է հաշվառման մատյաններ՝
   1) ֆիզիկական անձանց համար, որտեղ գրանցվում են անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և/կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի տվյալները, որոնք հավաստվում են անձը հաստատող փաստաթղթով, բնակչության պետական ռեգիստրի կամ համայնքապետարանի տրամադրած տեղեկանքով: Այդ մատյաններում գրանցվում են նաև ըստ հասցեի բնակելի նշանակության անշարժ գույքի տվյալները՝ սեփականության կամ վարձակալության /օգտագործման/ իրավունքը հաստատող փաստաթղթի /վկայականի/ հիման վրա.
   2) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար, որտեղ տվյալները գրանցվում են իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տրամադրած վկայականի և անշարժ գույքի սեփականության կամ վարձակալության /օգտագործման/ իրավունքը հաստատող փաստաթղթի /վկայականի/ հիման վրա.
   3) աղբահանության վճար վճարողների հետ կնքված պայմանագրերի գրանցման համար:

II. Աղբահանության վճարի գանձումը

8. Աղբահանության վճար վճարողների հաշվառման տվյալների հիման վրա Կազմակերպությունը նրանց հետ կնքում է պայմանագրեր (պայմանագրի օրինակելի ձևերը՝ համաձայն Արենի համայնքի ավագանու՝ 08.07.2022 թ.-ի թիվ 72 որոշման թիվ 1 և 2 հավելվածների): Պայմանագրերում փոփոխություններ և լրացումներ կատարվում են աղբահանության վճարների դրույքաչափերի, աղբահանության պայմանների, աղբահանության վճար վճարողների հաշվառման տվյալների փոփոխման դեպքում: Աղբահանության վճարի զեղչի արտոնությունից օգտվողների հետ կնքվում է լրացուցիչ համաձայնագիր՝ համաձայն Արենի համայնքի ավագանու՝ 08.07.2022 թ.-ի թիվ 72 որոշման թիվ 3 հավելվածի, որը հանդիսանում է հիմնական պայմանագրի բաղկացուցիչ մասը:

9. Աղբահանության վճար վճարողների հետ կնքված պայմանագրի մեկ օրինակը պահվում է Կազմակերպությունում, որին կցվում են հաշվառման համար ներկայացված փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև՝ աղբահանության վճարի զեղչի արտոնություն տվող փաստաթղթերի պատճենները:

10. Յուրաքանչյուր տարվա հունվար ամսին Կազմակերպության համապատասխան աշխատակիցների կողմից ստուգվում են աղբահանության վճար վճարողների հաշվառման մատյաններում գրանցված տվյալների համապատասխանությունը առկա վիճակին, և կատարված աշխատանքների արդյունքների մասին՝ մինչև փետրվարի 5-ը, Կազմակերպության ղեկավարին ներկայացվում է հաշվետվություն: Հաշվետվության հիման վրա հաշվառման մատյաններում կատարվում են փոփոխված տվյալների համապատասխան գրանցումներ, որոնք հիմք են հանդիսանում աղբահանության վճար վճարողների հետ նոր պայմանագրի կնքման կամ կնքված պայմանագրերում փոփոխություններ և /կամ/ լրացումներ կատարելու համար: Կազմակերպությունը համայնքի ղեկավարին է ներկայացնում ամսական տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակաշրջանում իրենց կողմից աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման գործառույթների իրականացման արդյունքների (հաշվետվություն) վերաբերյալ:

11. Աղբահանության վճար վճարողները՝ իրենց հաշվառման տվյալների փոփոխության (հաշվառված կամ բնակվող անձանց թվի փոփոխություն, աղբահանության վճարի զեղչի արտոնության իրավունքի ձեռք բերում կամ կորուստ և այլն) դեպքում պարտավոր են փոփոխության կատարման օրվանից 10-օրյա ժամկետում հայտնել Կազմակերպությանը՝ կնքված պայմանագրերում համապատասխան փոփոխություն կատարելու համար:

12. Աղբահանության վճարի հաշվարկման համար հիմք է հանդիսանում կնքված պայմանագիրը:

13. Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատվածը օրացուցային ամիսն է:

14. Յուրաքանչյուր ամսվա համար աղբահանության վճարը պետք է վճարվի անկանխիկ՝համայնքի բյուջեի համապատասխան հաշվեհամարին, մինչև հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

18. Աղբահանության վճարի վճարումը սույն կարգով սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար աղբահանության վճար վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված աղբահանության վճարի գումարի 0,075 տոկոսի չափով, դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար: Տույժերը հաշվարկվում են աղբահանության վճարի վճարման ժամկետին հաջորդող ամսվա 1-ից:

Հավելված 6
Արենի համայնքի ավագանու
08.07.2022 թ.-ի թիվ 72-Ա որոշման

ԿԱՐԳ
ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգը նպատակ ունի կարգավորել Արենի համայնքի (Ագարակաձոր, Աղավնաձոր, Արենի, Արփի, Գնիշիկ, Ելփին, Խպչիկ, Չիվա, Ռինդ, այսուհետ՝ Համայնք) տարածքում աղբահանության իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի գործողությունը տարածվում է համայնքի աղբահանության կազմակերպման պատասխանատուների, համայնքի վարչական տարածքում գործող իրավաբանական անձանց, համայնքի մշտական և ժամանակավոր բնակիչների, աղբահանության ծառայություն ստացող այլ անձանց վրա:

3. Համայնքի տարածքում աղբահանությունն ու սանիտարական մաքրումը պարտադիր և պարբերաբար իրականացվող աշխատանքներ են, որոնք իր ուժերով ու տեխնիկական միջոցներով իրականացնում է համայնքի ավագանու որոշմամբ աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները իրականացնող համայնքային հիմնարկը կամ համայնքի կարիքների համար գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված օպերատորը (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահանջների պահպանմամբ, որպես սկզբունք ընդունելով՝

1) մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական (վտանգավոր) ներգործության նվազեցումը և չեզոքացումը.

2) բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովումը.

3) տարածքների աղտոտման, աղբակույտերի առաջացման անթույլատրելիությունը և տարածքների մաքրումը աղբից.

4) օգտահանման ենթակա թափոնների տեսակավորման, օգտագործման ու վերամշակման համար պայմանների ստեղծումը և աղբավայրերում տեղադրվող թափոնների ծավալների նվազեցումը.

5) աղբահանության և սանիտարական մաքրման վերաբերյալ տեղեկատվության մատչելիության և հանրային իրազեկվածության ապահովումը.

6) աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների մեքենայացումը:

4. Սույն կարգի իմաստով «Աղբ» հասկացությունը իր մեջ ընդգրկում է համայնքի բնակչության կենցաղային կարիքները հոգալու արդյունքում առաջացած, կազմակերպությունների և առևտրի օբյեկտների արտադրած՝ իրենց կազմով, ֆիզիկական, քիմիական և կենսաբանական հատկանիշներով բնակչության կողմից կենցաղային կարիքները հոգալու արդյունքում արտադրած թափոններից չտարբերվող, այն մնացորդները, որոնք կորցրել են իրենց սկզբնական սպառողական հատկությունները ու տեղում չեն վերաօգտագործվում, ինչպես նաև համայնքի տարածքի սանիտարական մաքրման արդյունքում կուտակված թափոնները:

5. Կազմակերպությունը համայնքի տարածքում գտնվող բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների սեփականատերեր և վարձակալ հանդիսացող կամ այլ օրինական հիմքով այն տիրապետողներին՝ նրանց հետ կնքված պայմանագրերի համաձայն, մատուցում է աղբի հավաքման,

փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, վնասազերծման և/կամ թաղման ծառայություններ:

6. Կազմակերպությունը իրականացնում է համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների սանիտարական մաքրումը, որն իր մեջ ընդգրկում է փողոցների, հրապարակների, պուրակների, բակերի, մայթերի, անցումների, գետնանցումների, հուշարձանների, սիզամարգերի մաքրումն աղբից, տերևակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից, փողոցների, մայթերի և անցումների ձյունից և սառույցից մաքրումը, ընդհանուր օգտագործման համար տեղադրված աղբամանների սպասարկումը՝ պմենօրյա հաճախականությամբ:

7. Համայնքի տարածքում աղբահանության կազմակերպումն իրականացվում է հատուկ աղբատար և հարմարեցված (որոնք շահագործվում են սահմանված կարգով աղբահանության կազմակերպման նպատակների համար) մեքենաների՝ աղբատար փոխադրամիջոցների միջոցով, որոնք պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ հաստատված նորմերին: Աղբահանությունը համայնքում իրականացվում է սահմանված ներհամայնքային ճանապարհներով և փողոցներով՝ համաձայն աղբահանության սխեմաների:

8. Կազմակերպությունը աղբը տեղափոխում է աղբավայր կամ հատուկ հատկացված տեղեր, որոնք գտնվում են համայնքի հսկողության ներքո:

9. Աղբանոթները, աղբարկղերը, աղբամանները, աղբի հավաքման կոնտեյներները (այսուհետ՝ աղբամաններ) տեղադրվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան նախատեսված վայրերում, այնպես, որ Կազմակերպությունը հնարավորություն ունենա պատշաճ հավաքել և տեղափոխել աղբը: Աղբամանները սովորաբար տեղադրվում են նույն վայրերում, սակայն այդ վայրերը չպետք է սահմանափակված լինեն միայն բնակելի շենքերի, կազմակերպությունների, զբոսայգիների ու պուրակների, հասարակական վայրերի հարակից տարածքներով:*

10. Աղբի, թափոնների կուտակման և հավաքման համար նախատեսված աղբամանները պետք է՝

1) պատրաստված լինեն դիմացկուն մետաղից, ծանր պլաստիկից, սեղմված/խտացված մանրաթելային (ֆիբր) կոնստրուկցիայից կամ այլ նյութից՝ նշագծումով, թե ինչ տեսակի և որքան աղբ կարելի է լցնել աղբամանի մեջ.

2) ունենան համայնքի կողմից սահմանված հատուկ արտաքին տեսք (կափարիչ, փական, բռնակներ, անիվ) պատշաճ բեռնաթափման նպատակով.

3) ունենան կլոր կամ ուղղանկյուն ձև՝ 0.4-ից մինչև 1.1 խոր.մետր տարողությամբ, բայց ընդհանուր քաշը աղբի հետ միասին, ոչ ավել քան 500 կգ (նկատի ունենալով, որ աղբատար մեքենայի մանիպուլյատորի բեռնաբարձման առավելագույնը 500 կգ է).

4) ունենան դրանց մեջ կուտակվող թափոնների համապատասխան ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական հատկություններ՝ դրանց բացասական ներգործությունից մարդու առողջությունը ու շրջակա միջավայրը պահպանելու համար.

5) ունենան համապատասխան գույն (մեկը մյուսից առանձնացնող), որը հնարավորություն կտա աղբահանության ծառայությունից օգտվող անձանց՝ աղբը՝ ըստ տեսակի, հավաքելու համապատասխան աղբամանների մեջ:

11. Աղբամանները տեղադրվում են բնակելի և հասարակական շինություններից ոչ պակաս, քան 15 մ, և ոչ ավելի, քան 100 մ հեռավորության վրա: Պուրակներում, զբոսայգիներում աղբամանները տեղադրվում են մարդկանց զանգվածային կուտակման վայրից ոչ պակաս, քան 50 մ հեռավորության վրա: Աղբամաններն ունենում են կափարիչներ և աղբով լցվում են 2/3-ից ոչ ավելի մակարդակով:

12. Աղբամանների տեղադրումը պարտադիր է ավտոկանգառների, հասարակական տրանսպորտի կանգառների, առևտուր իրականացնող

օբյեկտների մուտքերի մոտ, զբոսայգիներում, պուրակներում, կայարաններում, շուկաներում, տոնավաճառներում, հանգստի գոտիներում և այլն:

13. Փողոցներում աղբամանների միջև ապահովվում է ոչ ավելի, քան 70 մ հեռավորություն: Պուրակներում, զբոսայգիներում աղբամանների քանակությունը որոշվում է 800 քմ մակերեսին 1 ամբաման հաշվարկով: Գլխավոր զբոսուղիներում աղբամանների միջև հեռավորությունը ընդունվում է 40 մ-ից ոչ ավելի:

14. Աղբի համար նախատեսված վայրում օգտագործելի բժշկական նյութեր, դեղորայք, դեղահաբեր, կաուստիկ թթուներ, ներկանյութեր, մեքենաների յուղեր, ցանկացած տեսակի հեղուկներ, պայթուցիկ նյութեր, ասբեստ կամ նմանատիպ այլ վտանգավոր նյութեր, կամ այլ վտանգավոր թափոններ (ինչպիսի սահմանում տված է «Թափոնների մասին» ՀՀ օրենքում, ինչպես նաև իրենց բնակարանում կամ բնակելի տանը օգտագործված այնպիսի իրեր, առարկաներ, նյութեր կամ այլ թափոններ տեղադրելու դեպքում, երբ համապատասխան բժշկական ծառայությունների կոմից հայտնաբերվել են վարակիչ հիվանդություններ կամ այլ համաճարակային ինֆեկցիաներ), տեղադրող անձինք պատասխանատվություն են կրում ՀՀ օրենքով սահմանված կարգով:

15. Ֆիզիկական և իրավաբանական անձինք, մասնավորապես համայնքի բնակիչները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և հանրորեն ճանաչված և ընդունված սանիտարական և հակահամաճարակային կանոնների համաձայն, պարտավորվում են մաքուր պահելու քաղաքի ցանկացած հանրային տարածքը՝ փողոցները, մայթերը, պուրակները, այլ հանրային տարածքներ, ինչպես նաև սեփականության իավունքով իրենց պատկանող տարածքները, առանց համապատասխան թույլտվությունների չայրել համապատասխան աղբը (պլաստիկ նյութերը և առարկաները, այդ թվում՝ պոլիէթիլենե տոպրակները և շշերը, ներկանյութերը և յուղերը, ռետինե և կաշվե իրերը և նյութերը, այլ վտանգավոր թափոնները), որպեսզի դրանք պատճառ չհանդիսանան հանրային տարածքներում աղբի՝ չնախատեսված վայրում թափման, կուտակման և պահման համար:

16. Ֆիզիկական և իրավաբանական անձինք իրավունք ունեն տեղեկացնելու Կազմակերպությանը, թե քանի աղբաման է պետք տվյալ հասցեի տարածքի աղբահանությունը պատշաճ կազմակերպելու համար:

17. Շինարարական և/կամ խոշոր եզրաչափի աղբի առաջացման դեպքում ֆիզիկական և իրավաբանական անձինք պարտավոր են Կազմակերպությանը ծանուցել աղբի հեռացման միանգամյա ծառայություն մատուցելու անհրաժեշտության մասին, որի համար կնքվում է լրացուցիչ համաձայնագիր (համաձայն «Արենի համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման եվ գանձման կարգ»–ի հավելվածի Ձև 3-ի):

18. Աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման ամենօրյա աշխատանքների համար պատասխանատու անձը Կազմակերպության տնօրենն է, որը արձագանքում է ստացված հաղորդումներին, բողոքներին, նամակներին, վերահսկողություն է իրականացնում մատուցվող ծառայության ընթացքի, որակի, շրջակա միջավայրի պահպանման սահմանված նորմերի, սանմաքրման սխեմաների, աշխատանքային գրաֆիկի պահպանման նկատմամբ:

19. Խախտումներ հայտնաբերելու դեպքում ֆիզիկական և իրավաբանական անձինք պարտավոր են այդ մասին մինչև հաջորդող աշխատանքային օրվա վերջ գրավոր տեղեկացնել Կազմակերպությանը: Սահմանված ժամկետում չտեղեկացնելու դեպքում կորցնում են իրենց հայտնաբերած խախտումները վկայակոչելու իրավունքը:

20. Կազմակերպությանը ծառայության մատուցման ընթացքում պարտավոր է կատարել տրված ցուցումները 3 աշխատանքային օրվա ընթացքում, եթե դրանք դուրս չեն գալիս կնքված պայմանագրի շրջանակներից:

21. Կազմակերպությանը պարտավոր է՝

1) մաքուր վիճակում պահել տեղադրված աղբամանները և աղբատար մեքենաները՝ պարբերաբար իրականացնելով դրանց ախտահանումը համապատասխան ախտահանող և մաքրող նյութերով.

2) սարքին վիճակում պահել աղբամանները, շահագործման համար ոչ պիտանի դարձածները փոխարինել նորերով.

3) աղբարկղերից աղբի հեռացումից հետո ապահովել դրանցից 3 մ շառավղով շրջակայքի մաքրությունը: Մաքրությունը սույն կարգի իմաստով շրջակայքի այն վիճակն է, երբ աղբի տեղափոխումից անմիջապես հետո աղբարկղերից 3 մ շառավղով շրջակա տարածքը ամբողջությամբ կամ համարյա ամբողջությամբ մաքուր է, իսկ առնվազն 30 րոպեի ընթացքում դրանց 3 մ շառավղով տարածքում չկան թափված աղբի կտորներ կամ նկատվելիք աղբի կտորները չեն գերազանցում 5-6 կտորը և միմյանցից հեռու են գտնվում.

4) ապահովել ավլելուց գոյացած աղբի հեռացումը և ավլած տարածքի մաքրությունը առնվազն 30 րոպեի ընթացքում գոյացած աղբի հեռացումից հետո, այսինքն՝ ավլած տարածքի այն վիճակը, երբ չկան թափված աղբի կտորներ կամ դրանց մակերեսը չի գերազանցում յուրաքանչյուր 10 քմ-ի վրա մինչև 5 կտոր աղբը.

5) ապահովել աղբի հավաքումն ու փոխադրումը համապատասխան աղբատար/բեռնատար մեքենաներով՝ սահմանված ժամկետներին համապատասխան՝ աղբարկղերի տեղադրման վայրից մինչև սահմանված աղբավայր.

6) սեզոնային, տոնական օրերի կամ այլ փոփոխությունների հետևանքով աղբի ավելացման դեպքում լրացուցիչ աղբարկղեր տեղադրել 10 աշխատանքային օրվա ընթացքում կամ ավելացնել աղբահանության հաճախականությունը.

7) թափոնների հավաքումն ու փոխադրումն իրականացնել բազմաբնակարանային շենքերի համար առնվազն 3 օրը մեկ անգամ, անհատական բնակելի/առանձնատների համար առնվազն 2 օրը մեկ անգամ՝ ժամը 8:00-ից 22:00-ն ընկած ժամանակահատվածում՝ սահմանված աշխատանքային գրաֆիկին համապատասխան, իսկ շրջիկ աղբատար մեքենաների դեպքում՝ ոչ պակաս, քան օրը մեկ անգամ՝ ժամը 8:30-ից 19:30-ը՝ սահմանված աշխատանքային գրաֆիկին համապատասխան:

22. Կազմակերպությունների և առևտրի օբյեկտների աղբահանությունը պետք է կատարվի հնարավորինս համայնքի բանկելի թաղամասերի սպասարկմանը զուգահեռ՝ ըստ կողմերի միջև կնքված պայմանագրով սահմանված աղբահանության կարգին համապատասխան:

23. Սահմանված ժամանակացույցին և տեղերին համապատասխան իրականացվում է համայնքի փողոցների մաքրում՝ ավլելու և ջրով լվանալու միջոցով: Փողոցների սանիտարական մաքրման աշխատանքների իրականացման ժամերն են ոչ շուտ քան 04:00 և ոչ ուշ քան 15:00:

24. Համայնքի բնակիչները և իրավաբանական անձանց աշխատակիցները պարտավոր են՝

1) աղբը աղբամանների կամ շրջիկ աղբատար մեքենաների մեջ լցնել սահմանված ձևով.

2) աղբամանների կամ շրջիկ աղբատար մեքենաների մեջ չլցնել վտանգավոր թափոններ, շինարարական, մեծածավալ/մեծեմաշտաբ աղբ, որոնք իրենց ֆիզիկական , քիմիական կամ կենսաբանական հատկություններով վտանգավոր

են մարդու առողջության և շրջակա միջավայրի համար և պահանջում են դրանց հետ վարվելու հատուկ մեթոդներ, եղանակներ միջոցներ.

3) չտեղափոխել, չտեղահանել կամ չշրջել աղբամանները.

4) թափոնները լցնել միայն աղբամանների կամ շրջիկ աղբատար մեքենաների մեջ.

5) խոշոր եզրաչափի աղբի գոյացման դեպքում պատվիրել նշված աղբի՝ համապատասխան կոնտեյներով փոխադրումը.

6) սահմանված ժամկետում և սահմանված դրույքաչափով վճարել աղբահանության վճարը:

25. Ոչ կենցաղային աղբը, ինչպես նաև խոշոր եզրաչափերով աղբը հավաքվում և պահվում է աղբահանության վճար վճարողների ձեռք բերած կամ Կազմակերպության կամ աղբի հավաքման և փոխադրման թույլտվություն ստացած իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ տրամադրած և դրանց համար նախատեսված աղբամաններում կամ կոնտեյներներում, որոնք տեղադրվում են աղբահանության վճար վճարողների համապատասխան տարածքներում: Ընդ որում, աղբամանները կամ կոնտեյներները աղբահանության համար վճարողների պահանջով կարող է տրամադրվել վարձակալության հիմունքներով:

26. Չի թույլատրվում՝

ա) աղբի տեղադրումը դրա համար չնախատեսված վայրերում,

բ) սպառման թափոնների այրումը ,

գ) աղբի համար նախատեսված վայրերում տեղադրելու անօգտագործելի բժշկական նյութեր, դեղորայք, դեղահաբեր, կաուստիկ թթուներ, ներկանյութեր, մեքենաների յուղեր, ցանկացած տեսակի հեղուկներ, պայթուցիկ նյութեր, ասբեստ կամ նմանատիպ այլ վտանգավոր նյութեր ու թափոններ,

դ) աղբի համար նախատեսած վայրում տեղադրել սատկած կենդանու մարմին:

27. Սատկած կենդանու մարմինը պետք է արագորեն հեռացվի քաղաքի առողջապահության պատասխանատուի ցուցումով: Եթե սատկած կենդանու տերը հայտնի է, ապա հեռացումն իրականացվում է նրա կողմից, իսկ եթե տերը հայտնի չէ, ապա՝ Կազմակերպության կողմից:

28. Համայնքի տարածքում աղբամանների տեղակայման վայրերը և աղբահանության հաճախականության գրաֆիկը՝ համաձայն սույն Կարգի հավելվածի Աղյուսակի:

* կցվում է բնակավայրերի վարչական ղեկավարների կողմից հաստատված, բնակավայրերում աղբամանների տեղադրման քարտեզները

Հավելված 7
Արենի համայնքի ավագանու
08.07.2022 թ.-ի թիվ 72-Ա որոշման

ՍԽԵՄԱ
ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ

1. Արենի համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները իրականացնում է 1 հատուկ աղբատարով և 1 տրակտորով (խաչիկ բնակավայր), որոնք շահագործվում են սահմանված կարգով աղբահանության կազմակերպման նպատակների համար:

2. Յուրաքանչյուր աղբատար մեքենայի աղբահանության երթուղին ընդգրկում է՝ ավտոկայանատեղի, նախատեսված վայր, աղբավայր՝ կատարելով 10-20 կմ վազք յուրաքանչյուր բնակավայրում:

3. Աղբարկղերից աղբի հավաքումը և փոխադրումը շրջիկ աղբատար մեքենաներով կատարվում է հաճախականությամբ՝ համաձայն համայնքի ավագանու որոշմամբ հաստատված հասցեների և ժամանակացույցի:

4. Ձմռան ամիսներին՝ սանիտարական մաքրման տարածքների ձյունով և սառույցով պատված լինելու դեպքում, կատարվում է տարածքների ձյունից և սառույցից մաքրումը:

5. Համայնքի հուշարձանների սանիտարական մաքրումն ըստ ամիսների իրականացվում է՝ համաձայն սույն Սխեմայի աղյուսակ 1-ում նշված հասցեների և ժամանակացույցի:

6. Համայնքի բնակավայրերի սանիտարական մաքրումն իրականացվում է հրապարակներում, բոլոր հուշարձանների հարակից տարածքներում, կուլտուրայի տների հարակից տարածքներում:

9. Յուրաքանչյուր օր քաղաքի տարածքից հավաքվում և աղբավայր է տեղափոխվում մոտ 5 տ ավլվածք և թափոններ: Աղբավայր տեղափոխված աղբակույտերը պարբերաբար տեղում հարթեցվում են:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ (ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ)

N	Հուշարձանի անվանումը	Գտնվելու վայրը	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
1	Ագարակաձոր բնակավայրի մշակույթի տան հարակից տարածքի պուրակ պուրակ	Արենի համայնք, բն. Ագարակաձոր	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
2	Աղավնաձոր բնակավայրում հայրենական և Արցախյան պատերազմների զոհերի հիշատակին նվիրված հուշագիամալիր	Արենի համայնք, բն. Աղավնաձոր	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
3	Արենի բնակավայրի կենտրոնական հրապարակ և հայրենական ու Արցախյան պատերազմների զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիր	Արենի համայնք, բն. Արենի	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
4	Արփի բնակավայրում հայրենական և Արցախյան պատերազմների զոհերի հիշատակին նվիրված հուշագիամալիր	Արենի համայնք, բն. Արփի	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
5	Գնիշիկի խաչ մատուռի հարակից տարածք	Արենի համայնք, բն. Գնիշիկ	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
6	Ելփին բնակավայրի կենտրոնական հրապարակ և հայրենական ու Արցախյան պատերազմների զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիր	Արենի համայնք, բն. Գնիշիկ	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
7	Խաչիկ բնակավայրի կենտրոնական հրապարակ	Արենի համայնք, բն. Խաչիկ	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
8	Չիվա բնակավայրի կարասների համալիր և կենտրոնական խաչմերուկ	Արենի համայնք, բն. Չիվա	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
9	Ռինդ բնակավայրի Փառքի պուրակ և մշակույթի տան հարակից տարածք	Արենի համայնք, բն. Ռինդ	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+